«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական

աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման

առանձնահատկությունները կրթական

գործընթացում

Հաստատություն՝ Երևանի հ. 22մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ **Լուսինե Պապոյան**

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն----------3

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ----------4

Գլուխ 2 Ազգային ծեսերի կազմակերպումը կրթական գործընթացում----------6

2.1 Ամանոր և Սուրբ ծնունդ----------7

2.2 Տյառնընդառաջ----------9

2.3 Ծաղկազարդ և Սուրբ Զատիկ----------10

2.4Վարդավառ կամ Հիսուս Քրիստոսի պայծառակերպության տոն----------13

Եզրակացություն----------15

Գրականության ցանկ----------16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքը անձի ձևավորման կարևորագույն փուլերից մեկն է, ուստի շատ կարևոր է տարբերակել , թե այս շրջանում երեխային ինչ է պետք սովորեցնել, հաղորդել, և առավել կարևոր է, թե ինչպես, ինչ մեթոդներով ու ձևերով դա անել:

Նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա հետաքրքրասեր և անհագ է իրեն շրջապատող աշխարհի նկատմամբ, հետևաբար երեխայի տարիքային այս առանձնահատկությունը պետք է առավելագույնս ճիշտ օգտագործվի կրթադաստիարակչական գործունեության ընթացքում:

Յուրաքանչյուր ոք, ով մուտք է գործում կրթական միջավայր, ունի առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին արժանի, բարոյական, ազգային և ավանդական արժեքները բարձր պահող անհատներ: Անձի բազմակողմանի ձևավորման և զարգացման համար կարևոր է նրա արժեհամակարգում բարոյական, գեղագիտական, հոգևոր,մշակութային արժեքների ընկալումը: Մանկավարժի առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական եւ հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումը սերմանելն է: Նրա խնդիրն է պահպանել եւ փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից: Ազգային արժեքները կարևոր նշանակություն ունեն եւ ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում: Նրանք կազմում են ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության և զարգացման երաշխիքը:

21րդ դարում ապրող երեխայի մեջ շատ քիչ են պահպանվում այդ սովորույթները, ինչու՞ երեխայի, որովհետև դրա վառ կրողը նա է, պետք է այնպիսի հիմք դնել , որ հետագայում այդ հիմքը առիթ հանդիսանա երեխաներին հարգել և գնահատել մեր ազգային հարստությունները՝ ծեսերը : Մեր ծեսերը, սակայն դարերի ընթացքում մի շարք փոփոխությունների են ենթարկվել : Ծեսերը մեզ են հասել դեռևս անտիկ շրջանից: Յուրաքանչյուր ազգ ունի իր ազգային ծեսերը և դրանք կազմակերպելու և իրականացնելու սովորույթները:

Մեր երկրում երեխաների մեջ ազգային արժեքների ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում, և որպես բովանդակային բաղադրիչ, հաշվի առնելով երեխաների կարողունակությունները՝ պետք է ունենալ համապատասխան վերջնաարդյունքներ:

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ

Հայ ազգային տոներն ու ծեսերը տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ են ունեցել: Սակայն այդ տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա: Հայկական մշակույթը հնուց ի վեր մինչ օրս էլ աչքի է ընկնում իր բազմաթիվ ու յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից: Ժողովրդի մեջ տոները նշելու ձգտումը շատ մեծ է, և տոնը ոչ թե հայտարարված տոնական օրն է, այլ՝ այդ օրվա բովանդակությանը և ժողովրդի մշակութային նորմերին համապատասխան տոնածիսական արարողակարգը: Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ: Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները՝ համաձայն Աստվածաշնչյան մեկնությունների:

Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդե-սերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը ու ազգային առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի և կենցաղի վրա: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը:

Կրթական համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց,

շրջապատի նկատմամբ: Այստեղ է, որ նրա մեջ սերմանվելու են մարդուն այնքան անհրաժեշտ բարության առաջին հատիկները: Հայ երեխայի բարության ու առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է: Հայ երեխային անհրաժեշտ է հայեցի կրթություն ու դաստիարակություն, և մենք՝ մանկավարժներս պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար:

Երեխաների աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի և քրիստոնեական դաստիարակության ձևավորման համար առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային տոները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները:

Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող և ակտիվ փոխանցող: Ազգային ծեսերը այն միջավայրն է, որը մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող: Շատ կարևոր է երեխային ներգրավել ծեսի նախապատրաստական աշխատանքներին:Այդ նախապատրաստական աշխատանքները հիմնականում ծիսական պարագաների պատրաստումն է: Այս գործողության ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում նկարելու, ներկելու, կտրելու և տարբեր նյութերից ծիսական պարագաներ պատրաստելու:Այս ընթացքում երեխաները խոսում են ծեսի մասին, քննարկում, թե ինչն են սիրում, ինչն է իրենց դուր գալիս և այլն: Պատմել իրենց ընտանիքում ծեսին պատրաստվելու ավանդույթի մասին: Նրանք դաստիարկի միջամտությամբ կարող են պատմել օրինակ ծիսական տիկնիկի նշանակության մասին: Ինչն էլ խթան է հանդիսանում ավելի սիրել ու կարևորել իրենց ստեղծածը: Այդ ամենի մասին պատմել ընտանիքի անդամներին ու ընկերներին: Նրանք այս ամենի շուրջ իրենց երևակայությամբ կարող են հորինել ու ավելացնել նոր դրվագներ, պատմել ու ավելացնել (այսինքն խաղալ) այն ինչ իրենց հոգուն ու միջավայրին է հարազատ: Հենց այս ամենը շատ մեծ ազդեցություն է թողնում երեխայի խոսքին նպաստող՝ սոցիալական, հուզական և մտավոր զարգացման վրա:

https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D6%87_%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BF%D5%B8%D5%B6%D5%A5%D6%80

Գլուխ 2 Ազգային ծեսերի կազմակերպումը կրթական գործընթացում

Ազգային ծեսերի վերականգնումը և հանրակրթության մաս դարձնելը ունի մի շարք դրական կողմեր.

- երեխան ծանոթանում է ազգային տոներին և անցկացման կարգին,
- սովորում է ծիսական երգերը, խաղերը, խաղերգերը, երեխան երգի միջոցով հաղթահարում է բարբառային դժվարությունները
- ծիսակարգը ուսումնասիրելիս ծանոթանում է տարածաշրջանային առանձնահատկություններին, արդյունքում վերականգնվում է տոնը իր ամբողջ ծիսակարգով:

Երեխաները ծեսի կազմակերպման ընթացքում շփվում և հաղորդակցվում են: Նրանք յուրովի նախագծում են իրենց անելիքը, քննարկում ընկերների հետ: Ծեսի կազմակերպման ընթացքում դաստիարակը ծեսի ու գործողությունների մասին անհրաժեշտ տեղեկություն է հաղորդում: Երեխաները պատմում են իրենց իմացածը և դրան ավելացնում նորը: Երեխան իր գործունեության բոլոր տեսակների զուգահեռ խոսում է, պատմում, թե ինչ է անում, կարծիք հայտնում, նկարագրում, հարց տալիս ու պատասխանում հարցերի: Նախադպրոցական կրթության մեջ ծեսերի կարևորության առանձնահատկություններից մեկն էլ այն է , որ երեխայի անձի զարգացման բոլոր ոլորտները զուգահեռ զարգանում են ծեսին նախապատրաստվելու և այն իրագործելու գործունեության ընթացքում: Նախ նշենք, որ երեխան ավելի շատ սովորում է լսածը գործողության վերածելով, քան մենակ լսելով: Այդ իսկ պատճառով ծեսերի և տոների իրագործումն երեխաների մասնակցությամբ շատ արդյունավետ միջոց է այդ ամենին հասնելու համար:

Ուսումնական հաստատություններում, ինչպես և իրական կյանքում, ծիսական գործունեությունը որոշակի փուլեր է ենթադրում՝

- ծեսի նախապատրաստում
- ծիսակատարություն:

Ծեսերն այսօր մենք իրականացնում ենք որպես գործունեության ձև, որով երեխան ապրում է՝ խաղում է, երգում, պարում, ընկալում ու ճանաչում:

2.1 Ամանոր և Սուրբ Ծնունդ

Ըստ պատմական տվյալների, վաղ ժամանակներում հայերը Նոր տարին նշել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը: Բնությունը հարություն է առնում գարնան սկզբին, և հայ մարդը այդ օրն էլ դարձրել է Նոր տարի և նշել շքեղ տոնախմբությամբ՝ փառաբանելով բնության զարթոնքը, ակնկալելով բերքառատ տարի: Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը) և տևել է մինչև սեպտեմբերի 9-ը: Ըստ ավանդության, Հայկ նահապետը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին՝ զատություն պարգևելով իր տոհմին ու հետնորդներին: Ենթադրաբար դա տեղի է ունեցել մ. թ. ա. 2492թ. օգոստոսի 11-ին: Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Նավասարդ: Բառը կազմված է նավա/նոր և սարդ/տարի բառերից և նշանակում է Նոր տարի:

Միայն 20–րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը, որպես տարվա սկիզբ, տոնելը: Հիշատակվում են տոնի տարբեր անուններ՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալոնտար, Կալանտար:

Մանկապարտեզում Ամանորյա տոնակատարությունը և Սուրբ Ծնունդը հատուկ տեղ է գրավում տոների շարքում: Այն երեխաների ամենասիրված տոներից մեկն է: Երեխաները մեծ ոգևորությամբ են պատրաստվում տոնին, բոլոր երգերը, պարերը սիրով են կատարում: Ամանորի նախաշեմին երեխաները պատրաստում են բամբակյա ձնագնդիներ, որոնցով հաճույքով խաղում են միջոցառման շրջանակներում, թեմատիկ զարդարանքներ, բացիկներ, որոնցով զարդարում ենք դահլիճը: Երեխաների հետ պատրաստում ենք ախոռը,որտեղ ծնվել է Հիսուս Քրիստոսը, աստղը, որով Քրիստոսի Ծնունդը ազդարարվել էր Բեթղեհեմի երկնքում: Սովորում ենք, թե Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության տոնի առիթով մարդիկ միմյանց ինչպես են ողջունում, ավետիս տալիս՝ ասելով. «Քրիստոս ծնավ և հայտնեցավ», որի պատասխանն է՝ «Օրհնյալ է Ծնունդը Քրիստոսի»:

Երեխաների սրիված երգերից են `

<<Բասեն բարի>>

Բասեն բարի, Բասեն բարի,
Հա՛յ Նուբարի, ջա՛ն Նուբարի,
Տղա՛, արի, բռնե, պարի,
Հա՛յ Նուբարի, ջա՛ն Նուբարի, Նուբարի:

Բասեն բարի, Բասեն բարի,

Հա՛յ Նուբարի, ջա՛ն Նուբարի,

Աղջի, արի, բռնե, պարի,

Հա՛յ Նուբարի, ջա՛ն Նուբարի, Նուբարի:

Երկու գնա, երեք արի,

Հա՛յ դոմբարի, ջա՛ն դոմբարի,

Տղա, արի, բռնե, պարի,

Հա՛յ դոմբարի, ջա՛ն դոմբարի, դոմբարի:

Արի՝ խաղանք էս դոմբարին,

Բասեն բարի, Բասեն բարի,

Ինչքան ուրախ է էս տարին,

Հա՛յ դոմբարի, ջա՛ն դոմբարի, դոմբարի:

<<Դինգ- դոնգ>>

Դինգ-դոնգ ձմռան երկնքում

Դինգ-դոնգ աստղերն են զնգում,

Դինգ-դոնգ դինգ, երկինքը աստղալից,

Լուռ ժպտում է մեզ հեռվից:

Դինգ-դոնգ դինգ, երկինքը աստղալից,

Լուռ ժպտում է մեզ հեռվից:

Դինգ-դոնգ, զիլ զնգա մեր զանգ,

Դինգ-դոնգ, տուր մեզ երազանք,

Դինգ-դոնգ դինգ, ինչ լավն է եղևնին,

Զիլ զանգերն իր թևերին..

Դինգ-դոնգ դինգ, ինչ լավն է եղևնին,

Զիլ զանգերն իր թևերին..

Ծիլինգ, ծիլինգ.....

Զիլ զանգերն իր թևերին:

2.2 Տյառնընդառաջ

Հայ Առաքելական Եկեղեցին Տյառնընդառաջը տոնում է փետրվարի 14–ին, Քրիստոսի ծննդից՝ հունվարի 6-ից քառասուն օր հետո: Այն անշարժ տոն է: Երբ Մարիամն ու Հովսեփը քառասնօրյա Հիսուսին բերում են տաճար, ընդառաջ է գալիս Տիրոջ գալստյանն սպասող Սիմեոն ծերունին, գրկում մանկանը և գոհություն ու փառք տալիս Աստծուն, որ իրեն արժանի դարձրեց Փրկչին տեսնելու: Այստեղից էլ տոնի անունը<< Տյառնընդառաջ>>՝ Տիրոջն ընդառաջ:

Տյառնընդառաջի մեջ պահպանվել են հինավուրց՝ նախաքրիստոնեական մաքրագործական, հատկապես հրապաշտական ծեսեր: Այդ օրը եկեղեցիների ու տների բակերում, տանիքներին, փողոցներում վառում են խարույկներ, երգելով ու աղոթելով պտտվում դրանց շուրջ, նորապսակ հարսներին թռցնում բոցերի վրայով (իբր մաքրագործվելու և ծնունդը նվիրագործելու համար), ամուլ կանայք «սուրբ» կրակով այրում են իրենց զգեստի փեշերը ամոքվելու հույսով ևն: Խարույկների մոխիրը երդիկներից շաղ են տալիս տների ու գոմերի մեջ, ինչպես նաև տնամերձ հողերին՝ մաղթելով տարվա առատություն, արգասավորություն, «տեր ընդ ձեզ» (որից էլ՝ տոնի «Տրնդեզ» ժողովրդական անվանումը): Ըստ ավանդույթի խարույկի շուրջը շրջան են կազմում, 7 շրջան պարում և վերջում 3 անգամ խարույկի վրայով թռնում:

Տյառընդառաջի ժամանակ պատրաստում են տարբեր ուտեստներ՝ խաշիլի և հալվայի տարբեր տեսակներ, կլոնդրակ, աղանձներ և այլ:

Մանկապարտեզում պարտադիր նշում ենք նաև Տյառնընդառաջի տոնը: Մանկապարտեզի բակում կրակ ենք վառում և շուրջը պտտվելով երգում ենք ծիսական երգեր: Դաստիարակների օգնությամբ երեխաները ցատկում են կրակի վրայով, տարբեր հատիկային կուլտուրաներից բաղկացած հատիկեղենը սփռում ենք շուրջը, իբրև առատության խորհրդանիշ:

2.3 Ծաղկազարդ և Սուրբ Զատիկ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունն եկեղեցու գլխավոր տոներից է: Աստծո Որդին իր արյունը հեղեց աշխարհի և մեղավոր մարդկանց փրկության համար, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ:

Զատիկը շարժական տոն է, այսինքն յուրաքանչյուր տարի նրա նշման օրը փոխվում է: Հայ առաքելական եկեղեցին այն նշում է գարնան գիշերահավասարին հաջորդող լիալուսնի առաջին կիրակի օրը, որն ընկնում է մարտի 21-ից հետո մինչև ապրիլի 25-ը (35 օր) ժամանակահատվածի վրա:

Զատկին նախորդում է Ավագ շաբաթը: Զատկի հետ առնչվող գլխավոր արարողությունները սկսվում են Ավագ շաբաթվա շաբաթ օրը և ավարտվում երկուշաբթի: Շաբաթ երեկոյան մատուցվում է Քրիստոսի հարության ճրագալույցի կամ ճրագալույսի պատարագ, որով վերջանում է Զատկին նախորդած յոթ շաբաթ տևած Մեծ Պասի շրջանը: Պատարագի ավարտին հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց» ավետիսով և ստանում «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի» պատասխանը: Հայ եկեղեցին Սուրբ Հարությանը նախորդող կիրակին նշում է Ծաղկազարդը , որը Քրիստոսի՝ հաղթականորեն Երուսաղեմ մտնելու հիշատակն է:

Ծաղկազարդը (ծառզարդար, ծառկոտրուկ), գարնանային բացօթյա տոնախմբությունների սկիզբն ազդարարող եկեղեցական և ժողովրդական տոն է , որին հաջորդում է Ավագ շաբաթը: Կատարվում է Զատկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի «Երուսաղեմ մտնելու օրվա»: Ծաղկազարդի օրը հայոց եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, առավոտյան կատարվում է ժամերգություն և Անդաստանի կարգ(անդաստանի արարողության խորհուրդը աշխարհի չորս կողմերի օրհնությունն է), որից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին, որոնք պահվում էին մինչև հաջորդ ծաղկազարդ: Դրանց վերագրվում էր բարիքի, առատության, պտղաբերության հմայական զորություն:

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինության՝ Ծաղկազարդը հռչակվել է որպես մանուկների օրհնության օր, քանի որ Տիրոջ՝ Երուսաղեմի տաճար մտնելու ժամանակ մանուկներն աղաղակում էին՝ ասելով <<Օրհնությո՛ւն, Դավիթի որդուն>> (Մատթ. 21:15): Այդ օրը եկեղեցիներում կատարվում է Մանուկների օրհնության կարգ: Հիսուսի մուտքը Երուսաղեմ ժողովուրդն ընդունել է խնդավառությամբ՝ ձիթենու և արմավենու ճյուղերի հետ իրենց զգեստները փռելով ճանապարհի վրա և աղաղակելով.

<<Օվսաննա՛ Բարձյալին , օրհնյալ լինի նա , ով գալիս է Տիրոջ անունով, օրհնյալ լինի մեր հոր՝ Դավթի թագավորությունը, որ գալիսէ: Խաղաղություն երկնքում և Փառք բարձրունքում>> **:**

Մեծ ոգևորությամբ և խանդավառությամբ ենք մանկապարտեզում պատրաստվում Ծաղկազրդին և Սուրբ Զատկի տոնին: Ծաղկազարդին երեխաների հետ ուռենու ճյուղերից պատրաստում ենք պսակներ, որը երեխաները կրում են գլխներին: Այս ամենը ուղեկցվում է երաժշտության ներքո: Ծաղկազարդին երեխաները դաստիարակի օգնությամբ բամբակի վրա ցանում են ցորեն, գարի, որը զատիկի խորհրդանիշներից է և մինչև Զատիկ խնամում ենք: Դրա կանաչ ծիլերն օգտագործում ենք սպասք ձևավորելու և ածիկ պատրաստելու համար: Տոնի նախաշեմին երեխաները պատրաստում են զանազան զարդարանքներ: Պատրաստում ենք կենաց ծառ, որը ձևավորում ենք երեխաների պատրաստած ձվերով և ցանկություններով: Նախապատրաստում ենք դատարկ ձվի պատյաններ, որոնք իրենց ձեռքով գեղեցիկ գույներով նկարազարդում են: Զատկի օրը դահլիճը համապատասխան ձևավորվում է: Սեղաններին դնում ենք Սուրբ Զատկի տոնին նվիրված ուտելիքներ՝ ներկված ձվեր, չամչով փլավ և այլն: : Երեխաներին տեղեկացնում ենք նաև, որ Զատիկի ծեսի գլխավոր խորհրդանիշը ձուն է: Ձուն առանձնահատուկ տեղ է գրավել պտղաբերության հնագույն ծեսերում: Այն համարել են աշխարհի օրինակ. դրսի կեղևը՝ երկինք, սպիտակ թաղանթը՝ օդ, սպիտակուցը՝ ջուր, իսկ դեղնուցը՝ երկիր: Միմյանց ողջունեցինք՝ <<Քրիստոս հարյավ ի մեռելոց>>, պատասխանելով <<Օրհնյալ է հարությունը Քրիստոսի>>:

Երեխաների պարզ ու մատչելի ներկայացնում ենք, որ Զատիկը եղել է նախաքրիստոնեական շրջանի տոներից մեկը, որը խորհրդանշում է աշխարհի նորացումն ու բնության զարթոնքը: <<Զատիկ>> բառը կապվում է տիեզերական արարչագործության հետ և նշանակում է <<զատվել>>, <<բաժանվել>>: Քրիստոնեության շրջանում այն նոր բովանդակություն է ստացել: Քրիստոսի մահը և հարությունը զուգորդվել են սերմը հողի մեջ թաղելու (մահ) և նրա ծլարձակման (հարություն) հետ: Երեխաների հետ ծանոթացանք և խաղացինք զատկական ծիսախաղեր՝ ձուկռվոցի, ձուպտտոցի, ձուգլորոցի :

https://www.youtube.com/watch?v=HpwzIX5HZBw
https://www.youtube.com/watch?v=DpWTpgAeW04
https://www.qahana.am/
https://hy.wikipedia.org/wiki/%D4%BE%D5%A1%D5%B2%D5%AF%D5%A1%D5%A6%D5%A1%D6%80%D5%A4

2.4 Վարդավառ կամ Հիսուս Քրիստոսի պայծառակերպության տոն

Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը, որը հայտնի է նաև Վարդավառ անունով, Հայոց եկեղեցու հինգ տաղավար տոներից է: Պայծառակերպություն նշանակում է պայծառ կերպարանք, պայծառ տեսք ունենալ: Պայծառակերպության տոնը նախապես տոնվել է Հայոց տոմարի Նավասարդ ամսի առաջին օրը՝ օգոստոսի 11-ին :Ավելի ուշ, Գրիգոր Լուսավորչի մեկնությամբ, Վարդավառի տոնը քրիստոնեական եկեղեցին հայտարարել է Թաբոր լեռան վրա Քրիստոսի պայծառակերպության երևույթին նվիրված տոն, ինչի համար և այն հայտնի է նաև Պայծառակերպություն կամ Այլակերպություն անվամբ:

Քրիստոսի Պայծառակերպության մասին վկայում են Մատթևոս, Մարկոս, Ղուկաս ավետարանիչները. «Եւ նրա դեմքը փայլեց ինչպես արեգակը, եւ նրա զգեստները դարձան սպիտակ ինչպես լույսը»: Եվ մինչ նա դեռ խոսում էր, ահա մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ. ամպից մի ձայն եկավ ու ասաց. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, դրա՞ն լսեցեք»:

Հեթանոսական շրջանում Վարդավառ տոնը նվիրված է եղել Աստղիկին: Աստղիկը հայոց դիցարանում համարվում էր սիրո և գեղեցկության աստվածուհին, ինչպես նաև ամպրոպի աստված Վահագնի սիրեցյալը:

Ըստ ավանդազրույցի՝ Աստղիկը ծնվել է ծովի փրփուրներից և որտեղ որ քայլում էր, նրա ոտքերից կաթկթացող արյան հետքերի տեղում վարդեր էին բուսնում: Ատղիկ աստվածուհին նաև երկնքից վարդեր շաղ տալով հայ աղջիկներին օժտում էր աստվածային գեղեցկությամբ: Վարդավառը հայոց աշխարհում ամենասիրելի տոներից մեկն էր և տոնվում էր մեծ շուքով: Այդ օրը բոլորը միմյանց վրա ջուր էին ցանում և իրար սեր ու գեղեցկություն տալիս: Տոնի ընթացքում նրանք փառաբանում էին Աստղիկին և միմյանց նվիրում տոնի խորհրդանիշը՝ վարդը:

Հնում մարդիկ Վարդավառը նշել են հիմնականում գետերի աղբյուրների կամ լճերի ափին՝ այնտեղ, որտեղ ջուրն առատ է եղել: Վարդավառը նաև համարվել էր ջրի տարերքի պաշտամունքի տոն: Հայերի մեջ տարածված են ջրի և անձրևաբերության հետ կապված բազմաթիվ ծեսեր:

Վարդավառը համարվում է նաև խնձորի տոնը: Ընդունված սովորություն կար, որ մինչև Վարդավառ խնձոր չէին ուտում: Եվ Վարդավառին՝ խնձորի բերքի օրհնությունից հետո, նոր կարելի էր բերքը հավաքել և օգտագործել:

Մանկապարտեզում Վարդավառը ևս նշվում է մեծ շուքով: Վարդավառն երխաների ամենասիրված տոներից մեկն է : Մինչ բակ դուրս գալը երեխաներին պատմում ենք տոնի խորհրդի և նշանակության մասին, ունկընդրում ենք Վարդավառին նվիրված երաժշտություն:Այնուհետև մանկապարտեզի ողջ անձնակազմը երեխաների հետ միասին խաղում ենք ջրոցի: Միջոցառումը ավարտում ենք խորոված խնձորի հյուրասիրությամբ, քանի որ խնձորը Վարդավառի խորհրդանիշներց մեկն է:

https://www.youtube.com/watch?v=2E-vR2zZj4Y
https://movsisyannune.com/2020/07/19/%d5%ba%d5%a1%d5%b5%d5%ae%d5%a1%d5%bc%d5%a1%d5%af%d5%a5%d6%80%d5%ba%d5%b8%d6%82%d5%a9%d5%ab%d6%82%d5%b6-%d5%bf%d5%a5%d5%a1%d5%bc%d5%b6-%d5%b4%d5%a5%d6%80%d5%b8%d5%b5-%d6%84%d6%80%d5%ab%d5%bd%d5%bf-2/

Եզրակացության

Հետազոտական աշխատանք կատարելու ընթացքում եկա այն եզրահանգման, որ ազգային տոները, ծեսերն ու ծիսակարգերը մեծ հնարավորություն են տալիս երեխաներին զարգացնել և հարստացնել իրեց գիտելիքները թե խոսքի զարգացման, թե երաժշտական , թե գեղարվեստական հմտությունների տեսանկյունից: Ազգային տոներին, ծեսերին մասնակցելու արդյունքում երեխան առնչվում է ազգային երգին ու պարին, սովորույթներին, մշակույթին, ձեռք է բերում նոր գիտելիքներ ու փորձ:Տեղի է ունենում փորձի փոխանակում: Յուրաքանչյուր երեխա պատմում է իրենց ընտանիքում կատարվող ծեսերի և տոների կազ-մակերպման ձևի մասին: Շատ կարևոր է մանկապարտեզ-ընտանիք կապը օգտագործել նաև ազգային ծեսերն ու տոները կազմակերպելու ժամանակ:Ծեսերի և միջոցառումների ժամանակ ծնողների ներգրավածությունը տալիս է իր դրական արդյունքը: Ծնողները դառնում են էլ ավելի ոգևորված, համախմբված, բարձրանում է վստահությունը մնկապարտեզի և դաստիարակության նկատմամբ: Շփումը մանկապարտեզի անձնակազմի հետ դառնում է մշտական և հաճելի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ:

2. Մկրտչյան Ս., Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն)

3 https:// https://greeks.am/azgayin-toner/

4. www.armgeo.am/ancient-armenian-holidays/

5.https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%A5%D6%80%D6%84%D5%AB_%D5%BF%D5%B8%D5%B6

6ttps://lilitghazaryanblog.wordpress.com/category/%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/page/9/